զգույշ և աստիճանաբար։ Նրան չի կարելի սառը ջրով ջրել, կարող է
հղաթափ լինել։ Անհրաժեշտ է խուսափել խմելուց, արագ քշելուց,
խիստ ուրբաններին։

Շատ մեծ ուշադրությամբ պետք է հետևել ծննդաբերական նշան-
ներին—փորի, շեքամեջի ուժեղ ալտուցին, սրբանուսկրի փոս ընկնե-
լուն, աճուկներին հեռանալուն, պտուկներին ուռչելուն և նրանից կաթի
կաթիլներ դուրս գալուն։

Նորմալ ծննդաբերությունը դեպքում չխանգարել զանրելին,—պա-
հելով դուրս յեկող մտրուկին։ Վերջինս կարելի չէ քաշել միայն
ծննդաբերական ցավերի ժամանակ։

Անկանոն ծննդաբերությունը դեպքում կանչել անասնաբուժի։

Ծնվող մտրուկին պետք է ընդունել մաքուր ցամքարի վրա։
Պորտը, վորով մտրուկը կապված է մոր հետ, չերկու տեղից կապվում
և մաքուր, յեռացրած բամբակի թելով և մեջտեղից կտրվում։ Պորտի
ծալերին քսել չող, կրեոլինի լուծվածք և այլն։ Պորտը կտրվում է
մոտավորապես մտրուկի փորից մեկ բութ լայնություն չափ հեռավո-
րությունից։ Բաժանված ընկերքն անմիջապես, կեղտոտած ձողով
հետ, դուրս է տարվում ախուրից և թաղվում հողի մեջ։

Վարակիչ վիժումի կամ վաղաժամ ծննդաբերությունների ժա-
մանակ ընկերքը ցույց են տալիս անասնաբուժին, արխաջն ախտա-
հանում։

ՄԱՏՆԱՇԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Նոր միայն ծնված մտրուկին շփում, չորացնում են չոր ձողովի
փափուկ վնջերով և քիչ ժամանակից հետո ոգնում մոտենալու մորը
և գտնելու պտուկը։ Կաթի առաջին բաժինը—զալը առանձնապես ող-
տակար է մտրուկին, վորովհետև ունենալով լուծողականի հատուկ-
ություն, նա ոգնում է մտրուկի աղիքների մեջ կուտակված կղկղանքը
մաքրելուն։ Կղկղանքի դուրս չգալու դեպքում, դիմում են կլիզմայի
ոգնություն։

Ծնելուց 6—8 օր հետո լավ տաք յեղանակին, մտրուկին ու մորը
դուրս են բերում զբոսանքի։ Վերջինս այնուհետև պետք է կատարել
ամեն օր, աստիճանաբար յերկարացնելով նրա տևողությունը։

Հասուկ ուժադուրյան առարկա պիտի դառնա մասդաօնեթի կերակ-
րելն ու խնամքը։

Ծնված մտրուկի հիմնական կերը, առաջին ամիսներին մոր կաթն
է, վորն իր մեջ պարունակում է ջահլ որդանիդմի համար բոլոր ան-
հրաժեշտ սննդաբար նյութերը։ 1¹/₂—2 ամսական հասակում պետք է
սկսել մտրուկին աստիճանաբար վարժեցնել վարսակի, սկսելով տալ
քիչ-քիչ, մեկ-յեկու բութ և մորից կտրելու մոմենտին հասցնել 1 կի-
լոգրամի։

Առաջին երգանում վարսակը մտրուկին պետք է տալ ջարդած վի-
ճակում, վորով մի կողմից նա ավելի լավ է ծամում վարսակը և մյուս
կողմից մտրուկի ծամող մկանները պաշտպանում ավելորդ հոգնածու-
թյունից։ Հենց այդ ժամանակ էլ մտրուկն աստիճանաբար սովորում է
կողկտ կերի—խոտի, ընտրելով մորը տված կերից ավելի համեղ և
քնքուշ խոտիկները։ Կանաչ խոտին մտրուկը շատ արագ է սովորում,
զբոսնելով արոտավայրում, նա, ընդորինակելով մորը և հետևելով
բնական բնազդին, սկսում է պոկոտել մատղաշ խոտերը, դրանով ա-
վելացնելով մորից ստացած կաթի վրա իր զարգացման համար ան-
հրաժեշտ սննդաբար նյութեր։ Վորպեսզի մտրուկն ուտի վերջացնի
իրեն հասանելի վարսակի բաժինը, վերջինը տրվում է նրան առան-
ձին փոքրիկ կերամանի մեջ, վորն իր շինվածքով անմատչելի չէ
մորը։

Մորից կտրելու մոմենտին, այսինքն 5—6 ամսական հասակում,
մտրուկը պետք է լիակատար կերպով վարժված լինի կողկտ կերի և
վարսակի։ Հենց այդ ժամանակ էլ անհրաժեշտ է նրան ձևքի սովո-
րեցնել։ Դա մեծ աշխատանք չի պահանջում, վորովհետև մտրուկների
մորից կտրելու ժամանակը համընկնում է նրանց մազը փոխելու ժա-
մանակին, իբրև նրանք փոխում են իրենց ազվամազը։ Մտրուկներն

իրենց մազը փոխելու ժամանակ քորվելու շատ ուժեղ ցանկություն են ունենում, ահա ոգտվելով այդ հանգամանքից, հեշտ և նրանց մարդուն սովորեցնելը:

Մագքափելու ժամանակ մտրուկի համար պետք է շինել փափուկ պախուց (непозудка) և հազցնել նրան:

Վերջավորությունները շոյելով, բարձրացնելով, սմբակներին կամացուկ թխկթիկացնելով սովորեցնում են նրան ապաղա պայտելուն:

Մեկուկն մոտից կտելը միանգամից են կատարում: Առաջին շրջանում մտրուկը տխրում է, հաճախ մի քիչ նիհարում, բայց այնուհետև արագ ընտելանում է և լավ խնամքի ու կանոնավոր կերակրելու պայմաններում նորմալ կերպով զարգանում: Մայրերից կտրած մտրուկներին բաժանում են առանձին իլխիների և նրանց հատկացնում լավագույն արոտը:

Կացուցային շրջանում (стойловый период) մտրուկներին տեղավորում են արխաշներում, յուրաքանչյուր մտրուկի հատկացնելով 4,5 ք. մետրից վոշ պակաս տարածություն: Մեծ արխաշների առկայություն դեպքում հանձնարարվում է տեղավորել յերկուսական մտրուկ, այդ նպատակի համար ընտրվում են ըստ հնարավորին միատեսակ զարգացման, խառնվածքի և ախորժակի անասուններ, վորովհետև տարբեր բնավորությունների դեպքում մտրուկներից մեկը մշտական կընեղացնի իր ընկերներին:

Հունվարի 1-ին մորից կտրած մտրուկները համարվում են տարեկաններ, այդ ժամանակները նրանց տրվելիք վարսակի չափը հասցվում է մինչև 2 կիլոգրամի:

Այն մոմենտից, յերբ մտրուկները զրկված են արոտավայրից ոգտվելու հնարավորությունից, չափազանց ցանկալի յե, մանավանդ ազնվացեղ մատղաշների համար, տրվող կերի մեջ մտցնել վորոշ քանակությամբ դազար, դազարը փոխարինում է հյութալի կերին, բացի զրանից նա պարունակում է իր մեջ առանձին նյութեր— վիտամիններ, զրա համար ել չափազանց ոգտակար է մտրուկի զարգացման համար:

Արոտավայրի շրջանի ժամանակ տարեկան մտրուկները բաժանվում են յերկու իլխու— ջահել հովատակների ու զամբիկների և առանձին արածում:

Յերկու տարեկան հասակում մտրուկը պետք է նստված լինի, յեքեք տարեկան հասակում արդեն ջահել ձին պետք է աստիճանաբար սկսի աշխատել:

ԲԱՆՎՈՐ ԶԻՆԻ ԼԾԱՍԱՐԲԸ ՅԵՎ ՍԱՅԼԱԿԱՌԲԸ

Բանվոր ձիակազմի լավագույն ոգտագործման կարևորագույն պայմաններից մեկը լծատարքը ձիուն հարմարեցնելն է: Լծապարքը յուրաքանչյուր ձիու համար հարմարեցվում է առանձին: Առանձին ուշադրություն պետք է դարձնել խամութի և լծաթամբիկի հարմարեցվելու վրա, վորովհետև անկանոն հարմարվելը ուժեղ կերպով անդրադառնում է ձիու ուսերի և բաշի յետևի մասի վրա, առաջացնում նրանց հիվանդություն և շատ անգամ պատճառ դառնում ձիուն աշխատունակների շարքից հանելուն:

Ձիատարքը պետք է լինի ամբողջ և պահվի կանոնավոր, վորպեսզի նա վափուկ լինի և չտրորի ձիու մարմինը, անհրաժեշտ է ուշադրություն արել և չորացնել:

Ձիատարքի կաշվի մասերը պարբերաբար պետք է յուղել խայծղանով կամ վորևե այլ ճարպով:

Նկատի ունենալով, վոր ձիատարքի թրջված մասերը հեշտություն տրորում են և ջարդում ձիու մարմինը, ուստի անհրաժեշտ է մառախլադատ յեղանակին աշխատելիս խամութն ու լծաթամբը պետք է ծածկել կաշվի կամ անթափանցիկ բրնձենոսե կտորով:

Սալլակաքը նույնպես հարմարեցվում է յուրաքանչյուր ձիու ըստ քաշանի (отлагня) յերկարություն ու լայնության, նայած ձիու չափին, այն հաշվով, վոր չխանգարի ձիու շարժումներին: Սա կարկվոր է առանձնապես հղի զամբիկներին նկատմամբ:

ԶԻՆԻ ԶԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԿԱՆԽՈՒՄԸ

Մի առած կա, թե ավելի հեշտ է հիվանդությունը կանխել, քան թե բուժել: Այս առածը կիրառելի յե բոլոր տեսակի անասունների համար, նրանց թվում է ձիերի: Կոլտնտեսությունները հաճախ ունենալով մեծ թվով ձիեր, հատկապես ուշադիր պետք է լինեն ձիերի անասնաբուժա-սանիտարական հսկողության տեսակետից, կոլտնտեսականները պետք է կարողանան նախապաշտպանել անասուններին այս կամ այն հիվանդությամբ վարակվելուց:

Այն միջոցները, վորոնք նախապաշտպանում են կոլտնտեսությունների անասուններին հիվանդանալուց, հանդիսանում են— լավ շենքը, ձիերի խնամքն ու պահելը, վորոնց մասին մենք արդեն խոսեցինք վերը: Բացի դրանից, նախապաշտպանողական միջոց է կարանտինի և անասնաբուժական հսկողության կիրառումը:

Յերբ դրսից ձիեր են բերում կոլտնտեսութուն, ապա նրանց նախապես ուշադրութեամբ քննում են անասնաբուժը: Այնուհետև նրանց 15 օրով առանձնացնում են մնացած ձիերից և տեղավորում հատուկ շենքերում: Յեթե այդ ժամանակամիջոցում առանձին անասուններ չեն ցուցաբերի հիվանդանալու վորևէ նշաններ, ապա նրանց տեղափոխում են ընդհանուր ախոռը: Անասունների այդպիսի առանձնացումը կոչվում է կարանտին:

Կարանտինը կատարվում է հետևյալ նկատառումներով. կոլտնտեսութունը բլրված ձիերը կարող են հիվանդ լինել, ընդ վորում այդ հիվանդութունը վորոշ ժամանակի ընթացքում չի լերում արտաքին նշաններով, այլ գտնվում է թաղնված վիճակում: Անասունի հիվանդութեան ահա այդ թաղնված շրջանը, կամ ինչպես ասում են, ուրիշ խոսքով, հիվանդութեան ինկուբացիոն շրջանն ամենավտանգավորն է վարակը մյուս անասուններին փոխանցելու տեսակետից, մանավանդ յեթե այդ անասունը գտնվում է ընդհանուր ախոռում:

Կարանտինի ժամկետը—15 օր, սահմանվում է այն նկատառումներով, վոր ամենից հաճախ վարակիչ հիվանդութունների մեծ մասի հիվանդութեան ինկուբացիոն շրջանը տևում է մոտավորապես այդքան ժամանակ:

Քանի վոր վարակը մի անասունից մյուսն անցնում է առանձին, սովորական աչքով անտեսանելի ելակների միջոցով, վորոնք միկրոօրգանիզմ անունն են կրած և վորոնք կարող են հիվանդ անասունից առողջներին անցնել մարդկանց կոշիկների, հագուստի և այլնի միջոցով. ապա անհրաժեշտ է, վոր կարանտինի ախոռում անասուններին պահող ու խնամող անձինք վոչ մի շփում չունենան մյուս ձիերի և առհասարակ կոլտնտեսության ընդհանուր շենքերում պահվող անասունների հետ:

Կարանտինում գտնվող ձիերի համար անհրաժեշտ է ունենալ կերերի համապատասխան պաշար: Կուպիտ կերերը կարանտինում պետք է բերվեն առանձին շենքից, վորտեղից ընդհանուր ախոռը կերեր չպետք է տարվեն: Բացի դրանից, կարանտինը պետք է ունենա առանձին ինվենտար, առանձին գոմաղբանոց և առանձին փառախ անասունների զրոսանքի համար:

Կարանտինում գտնված ձիերը կարելի չէ աշխատեցնել, սակայն վոչ մի դեպքում չի կարելի թույլ տալ, վոր այդ ձիերը շփվեն կոլտնտեսության մնացած ձիերի հետ:

Կոլտնտեսութեան մեջ գտնվող բոլոր ձիերը պետք է, ըստ հնարավորության, հաճախ քննվեն անասնաբուժի կողմից,—վոչ պակաս, քան տարեկան լերկու առգամ,— մեկը ձիերին արտավայր տանելուց առաջ, հետևապես դարնանը և մյուսը, աշնանը, յերբ ձիերին բերում են ձմեռելու: Ձիերին քննելը պետք է կրի առանձնահատուկ ուշադրի և մանրամասն բնույթ:

Յյուրաքանչյուր կոլտնտեսական ախոռում ապալման պետք է լինի հատուկ տետրակ, վորտեղ գրվում են անասնաբուժի արած բոլոր դիտողություններն ու ցուցմունքները: Այդ նույն տետրակում գրվում են բոլոր հիվանդ ձիերը՝ բուժման նշումներով, ախոռի ընդհանուր անասնաբուժաօսանիտարական դրությունը և անասնաբուժական անձնակազմի կարգադրությունները:

Կոլտնտեսական ախոռում վորևէ հիվանդութուն լերեսլու դեպքում, ախոռին ապաստելի դրիզադի բրիզադավարը պարտավոր է անմիջականորեն ինքը կամ կոլտնտեսության վարչութեան միջոցով, անմիջապես միջոցներ ձեռք առնել՝ անասնաբուժ հրավիրելու համար, իսկ մինչև նրա գալը՝ ցույց տալ առաջին ոգնությունը: Անասնաբուժի բոլոր ցուցմունքները կատարվում են անմիջապես: Կողմնակի անձանց մուտքը կոլտնտեսական ախոռ պետք է արգելվի, խուսափելու համար նրանց միջոցով վորևէ վարակիչ հիվանդութուն տանելուց:

Պետք է խուսափել ախոռի տերրիտորիայի վրա մեծ թվով ոտք ձիերի կուտակումից:

ՊԱՅԿԱՐ ՁԻԵՐԻ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ

ԽՆԶՆ Ե ԱՌԱՋԱՅՆՈՒՄ ՁԻԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիվանդություններ առաջացնելու, ինչպես եայիլ ցրանց ցրտալիլու ավելի լուրջ պահանգներն են— առասուների վաս խնամքը, վաս առելը յեվ ցրանց անկանոն կեռա կրելը:

Բորբոսով ծածկված պատերով, վատ ողս փոխիչ ունեցող խոնավ ախոռները, վորոնց հետևանքով շենքում կուտակվում է անասունների շնչառությունից փչացած և նրանց ալտաթորություններից ներված ողը, տրամադրում են անասունին զանազան ցրտառության հիվանդություններ:

Անհաբթ, թաց հատակն առանց բալականաչափ ցամքարի կարող է ձիու մարմնի, մանավանդ վերջավորությունների տարրեր վնասվածքների պատճառ դառնալ։ Առանց բալականաչափ ցամքարի տարրեր տեսակի քարե հատակները կարող են դանադան ցրտառության հիվանդությունների պատճառ հանդիսանալ՝ վերջավորությունների հողացում և ալյն։

Ձիերի վատ մաքրելը տրամադրում է նրանց քոսով հիվանդանալու։ Ձիու սմբակներին և վերջավորություններին անխնամ հետեւելը ընդհանրապես կարող է առաջացնել սմբակի լեղջուրի վնասում, նրա փխրունությունն ու գլուխարեկությունը, առաջացնել սլաքի փտում, չերկան բերել խոնավախտ և ալյն։

Կերակրելու վոշ ճիշտ կազմակերպումը կամ նրա տեխնիկան միշտ ու ամեն տեղ առաջացնում է ձիերի տարրեր հիվանդություններ։ Նրանք արտահայտվում են անասունների մարսողական գործարանների աշխատանքի խախտումով, իսկ դրա անմիջական հետեւողը լինում է անասունի նիհարումը և աշխատունակության կորուստը։

Շատ ուշադիր պետք է լինել կոլտնտեսության ձիերի համար արտավայր ընտրելիս։ Արտավայրի զնահատմանը պետք է մոտենալ վոշ միայն այն տեսակետից, թե ինչ քանակությամբ խոտալիք է կերի մոսսա կա աչտեղ, ալլ և այլն պիտի զնահատել այնտեղ բուսող խոտի վորակով։

Այնպիսի խոտերի մեծ քանակությունը, ինչպիսիք են արջընկույզը, մոլիխինդը, ընձախոտը և ուրիշները, վորոնք ունեն շշմեցնող և նույն լակ թունավոր հատկություններ, առաջացնում են անասունների թունավորումներ և չերեմն վերջանում մահով։

Առանձին բույսերի թունավոր հատկությունները չերեմն են գալիս ինչպես թարմ ժամանակ, այսինքն՝ կանաչ խոտի մեջ, այնպես էլ չոր խոտում։

ԻՆՉՊԵՍ ԵՆ ՎԱՐԱԿՎՈՒՄ ՁԻԵՐԸ

Անասունները վարակիչ հիվանդություններով հիվանդանում են, չեր նրանց որգանիզմն են ընկնում առանձին, հասարակ աչքով անտեսանելի ելակներ — մեկորներ։ Բնության մեջ նրանք հսկայական քանակությամբ կան։ Այս կամ այն հիվանդությունն առաջացնող մեկորները կոչվում են ախտածիններ կամ ախտաբերներ։

Նրանք անասունի մարմնի մեջ անցնում են տարրեր ճանապարհներով։ Բերանի, շնչառության գործարանների, կաշվի ծածկի խանգարումների — վերքերի, քերծվածքների միջոցով, միջատների կծելու միջոցով և այլն։

Չերեմն վարակումը կատարվում է առողջ անասունի՝ հիվանդ անասունի հետ անմիջականորեն շփվելու միջոցով, որինակ՝ քոսի ժամանակ, չեր աչք հիվանդության դրդիչները — քոսի տիգերը, անասունների շփվելու ժամանակ, հիվանդ անասունի կաշուց ընկնում են առողջի վրա։ Այս կամ այն ճանապարհով ձիու որգանիզմի մեջ ընկնելով, մեկորներն սկսում են բազմանալ և արտադրել առանձին թունավոր նյութեր, վորոնք և առաջացնում են ձիու այս կամ այն հիվանդությունը։

ԻՆՉՊԵՍ ԿԱՆԽԵԼ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ

Գիտնալով, թե ինչպես է կատարվում անասունների վարակումը, կարելի է պահպանելով գոյությունիմումի համապատասխան կանոնները, կանխել այս կամ այն հիվանդությունների առաջ գալն ու տարածվելը կոլտնտեսական ախտում։

Իսկ վորեկ վարակիչ հիվանդության կամ թեկուղ նրա նկատմամբ կասկած ծագելու դեպքում, այդ մասին իսկույն հայցնել անասնաբույին կամ անասնաբուժակին, իսկ վերջինների բացակայության դեպքում — ազրոնումին, գլուղխորհրդին կամ շրջգործկոմին։

Չսպասելով անասնաբուժի գալուն, հիվանդ կամ կասկածելի ձիերին անմիջապես պետք է առանձնացնել առաջնեից հատուկ շենքում — մեկուսարանում։ Այն ինվենտարը, վորի հետ կապված էր հիվանդ ձիու խնամքը, նույնպես անհրաժեշտ է մեկուսարան ուղարկել։ Իսկ հիվանդների հետ կանգնած կամ նրանց հետ վորեկ շփում ունեցած ձիերին պետք է նույնպես հեռացնել ընդհանուր ախտից, տեղափոխել նրանց առանձին շենքեր, ուր նրանք պետք է մնան այնքան, մինչև վոր անասնաբուժը կվորոշի հիվանդությունը և կվերացնի կարանինը։

Մեկուսարանները պետք է սարքվեն շատ պարզ ու ետան։ Նրանք պետք է գտնվեն հնարավորության սահմաններում հեռու այն ախտոներից, վորտեղ պահվում են առողջ ձիերը։

Այն կոլտնտեսություններում, վորտեղ կան վարակիչ հիվանդությամբ հիվանդ ձիեր, մինչև նրանց վերջնական առողջանալը պետք է դադարեցնել նոր ձիերի ստանալը, բացի դրանից, տվյալ կոլտնտեսության ձիերին չի կարելի թույլ տալ շփվելու կողմակի ձիերի հետ

ՇԵՆՔԵՐԻ ՄԱԳՐՈՒՄՆ ՈՒ ԱՆՏԱՀԱՆՈՒՄԸ

Հիվանդ ձիերին ախտից հեռացնելուց հետո, անհրաժեշտ է այն կացոցներում կամ արխաններում, ուր գտնվում են նրանք, մաքրել, գոմաղբի և կերի մնացորդներից։ Այդպիսիք պետք է անիչապես այ-

բիլ, վորովհետեւ կրաղը ածենալով և եծան ախտահանիչն ե. նուչնը պետք ե անել նաեւ ավելի եծան ինվենտարի հետ — վաչտե թիակներ, ավելներ և ալլն:

Կերամանները, դուլիերը, արխաջի պատերն ու դոնները, ձողերը կամ կացոցի ալլ միջնորմները պետք ե ուշադրութեամբ լլալ լալ չե-
ռացլած մոխրաջրով, անուշադիր յթողնելով անելլունները, փորակները և ալլն. ավելի մանր իրերը, ինչպես, որինակ՝ քերիչները, սմրակի կե-
ռերը և մլուսները պետք ե յեռացնել 30—40 րոպե:

Շենքը մաքրելուց հետո, վարակի պատճառ — միկրոբները լիովին վոչնչացնելու համար անհրաժեշտ ե ախոռն ախտահանել:

Վորպես ախտահանիչ միայն գործ են անում կրեոլին, սուլեմա, կարբոլլան թթու, քլորալին կիր և ալլն:

Փայտե հատակով կացուցներում կամ արխաջներում, վորտեղ լեղել են վարակիչ—հիվանդ ձիերը, ամենից լալ ե պոկել տախտակ-
ներն ու ալլել, վորից հետո խփել նորերը: Իսկ ալլ տախտակամածի տակ գտնված ամբողջ տարածութեան վրա հիմնովին ցանել չհանգցրած կիր: Իսկ աչտեղ, վորտեղ հատակը կավից ե, ամենից լալ ե 15—20 սանտիմետրի չափ վերցնել վերին շերտը և հեռացնել ախոռից, իսկ դուցած փոս տեղում առատորեն լցնել քլորալին կիր, վերից անել կավի նոր շերտ և տոփանել, թրջելով ախտահանիչ լուծույթով: Ան-
հրաժեշտ ե ախտահանել նաեւ աչն ձխասարքն ու սալլակառքը, վորով աշխատելիս են յեղել հիվանդ ձիերը:

Ասեմ տեսի ախտահանում անհրաժեշտ ե կատարել անասնաբուժի ցուցմունքներով յեւ նա ղեկավարւոյալ:

ՀԻՎԱՆԴ ՁԻԵՐԻ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Մեկուսարան տարված ձիերի համար պետք ե կազմակերպված լինի համապատասխան խնամք և հսկողութուն: Այդ նպատակի հա-
մար պետք ե ընտրվեն առանձին ձիապահներ, վորոնք վոչ մի զեպ-
քում չպետք ե շփվեն ընդհանուր ախոռի և առողջ ձիերի հետ: Մեկու-
սարան չպետք ե թողնվեն նաեւ աչնալիս անձինք, վորոնք խնամում են առողջ անասուններին:

Մեկուսարանի մուտքի մոտ անհրաժեշտ ե փոել խաիր, լալ թըր-
ջելով ախտահանիչ լուծույթով, նրանով վոտքերը մաքրելու համար: Նախքան մեկուսարան մտնելը անհրաժեշտ ե խալաթ հագնել և հեռա-
նալիս հանել, ձեռքերը լալ լվանալ վորեւ ախտահանիչ հեղուկով:

Հիվանդ ձիերը պետք ե անցնեն անասնաբուժի կողմից նրանց համար սահմանած բուժման լրիվ կուրսը, և հիվանդութունը բարե-
հաջող անցնելու դեպքում միայն նրանք տարվում են ընդհանուր ա-
խոռը, դարձյալ անասնաբուժի թուլլովութունից հետո միայն:

ԱՆԱՄՆԱԳԵՐԵԶՄԱՆՈՅԸ ՅԵՎ ԴԻԱԿՆԵՐԻ ՀԱՎԱՔԵԼԸ

Յուրաքանչյուր կուտնտեսութուն անպայման պետք ե ունենա իր անասնադերեզմանոցը: Նա պետք ե շինվի անասնաբուժի դե-
կավորութեամբ: Անասնադերեզմանոցի հողամասը պետք ե գտնվի բնակիչի շենքերից մոտ 500 մետր հեռավորութեան վրա, բարձրադիր ու չոր տեղում. հեռու ջրատեղից և արոտավայրերից: Յանկալի չե, վոր անասնադերեզմանոցի հողը լինի ավազոտ կամ ավազախոռ, այ-
սինքն՝ աչնալիս, վորը յերկար ժամանակ իր մեջ չսահի խոնավու-
թյունը:

Անասնադերեզմանոցը առողջ անասունների համար անմատչելի դարձնելու համար, պետք ե շրջապատված լինի բարձր, ամուր և խիտ ցանկապատով: Լավագուցն ցանկապատը կլինի հյուսված ցցապատ պատենչը: Յանկապատը արտաքին և ներքի կողմից պետք ե շրջա-
պատել լաչն ու խոր խանդակներով: Արտաքին խանդակը կծառայի արգելելու համար պատահաբար մուրված անասունին մոտենալու անասնադերեզմանոցին, իսկ ներքինը կընդունի և իր մեջ կպահի ա-
նասնադերեզմանոցից հոսող ջուրը, աչգլխով արգելելով վարակի տա-
րածումը:

Անասնադերեզմանոցը պետք ե ունենա ամուր դարբաս, վոր պետք ե միշտ կողպված լինի: Բանալին պետք ե պահվի կուտնտեսու-
թեան վարչութեան աչն անդամի մոտ, վորի վրա դրված ե ձիերի հըս-
կողութունը:

Կուտնտեսարան յուրաքանչյուր անգամի պէտք ե լալ հաշնի լիճի, վոր վարակիչ հիվանդութունից ստեղծ անասունի դիակը վարակի աղբյուր ե: Այդ պահանջով ե անհրաժեշտ ե դիակը, վորան կարելի չե, օտս տանել անասնադերեզմանոց:

Քանի վոր ձիու դիակն իր ընկած տեղում կարող ե իրենից հետո թողնել զանազան արտահոսութուններ քթից կամ հետուքից, կամ թե ուրիշ վորեւ ալլ հեռքեր, վորոնք կարող են հեշտութեամբ վարակել տարածելու պատճառ դառնալ, ուստի դիակը վերցնելու ժամանակ, վարակի տարածվելուց պաշտպանվելու նպատակով, պիտի պահպանել վորոշ կանոններ:

Այդ նպատակի համար ամենից առաջ անհրաժեշտ է ունենալ ներքին կողմից ցինկապատ հատուկ սալը: Շատ ցանկալի է նման սալի համար ծածկոց շինել, վորը կարգելի ճանճերին կամ ուրիշ միջատներին նստել դիակի վրա, հետեապես և տարածել վարակը:

Ձիու դիակն այն ձևով պետք է տեղավորել սալի վրա, վոր քթից, բերանից և հետոյքից դուրս թափվող հեղուկային արտաթորությունները չընկնեն դետնին: Սալի վրա յե դեղում նաև տեղից վերցրած հողի վերին շերտը, վորտեղ ընկած եր ձիու դիակը. ընկած անասունին խնամելու համար յեղած և մեծ արժեք չներկայացնող քոլոր իրերը նույնպես տարվում են անասնազերկմանոց: Վարակիչ հիվանդությունից ընկած անասունի կաշին պետք է վորեն ձևով փշացնել, վորպեսզի վոչ վոք չգալթակղվի հանել այն:

Ընկած անասունի դիակն անհրաժեշտ է թաղել չերկու մետրից վոչ պակաս խորութեամբ: Նախքան թաղելը պետք է դիակի վրա լցնել չհանգցրած կրի լուծույթ և հետո արդեն հողով ծածկել:

Հեռանալով անասնազերկմանոցից, անհրաժեշտ է վորոքերը խլամքով և ուշադրութեամբ մաքրել հողից, տուն գալիս կոշիկներին քսել թանձր խաճգան, ձեռքերը լավ լվանալ, իսկ վերնահագուստն ամենից լավ է միջանի ոը պահել արևի տակ: Այն սալը, վորով տարվել է դիակը, պետք է նույնպես անտահանվի, դրվի առանձին ենքում և պահվի փականքի տակ:

Ձմեռ ժամանակ ընկած անասունների դիակները տեղափոխելու ամար գործ է ածվում հենց նույն սալը, միայն նախապես հանվում են անիվները և դրվում քրշակներ:

ՁՈՈՎԵՏՄԱՆԻՄՈՒՄԸ ՁԻԵՐԻՆ ՅԵՐԱԹՈՒՂՈՎ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ

Յերկաթուղով տեղափոխելու ժամանակ անասուններին վարակվելուց և հիվանդանալուց պաշտպանելու, ինչպես նաև հիվանդություններ ծագելու և նրանց տարածվելու հնարավորությունները կանխելու համար անհրաժեշտ է պահպանել զոռանաանաբուժական վորոշ կանոններ:

Նախ և առաջ տեղափոխությունների համար տրամադրած խոշոր վագոնները պետք է մեծ խնամքով և ուշադրութեամբ մաքրվին ու անտահանվին:

Այս բանն առանձնապես կարևոր է ազնվացեղ անասուններին կատմամբ, որինակ՝ հովառակներին բեղմնակայաններ տանելու ժամանակ:

Անասուններ կամ անասնապահական հումուլթ տեղափոխելուց հետո, վագոնները պետք է մաքրվին և յետման ջրով լվացվին, իսկ այն վագոնները, վորոնց մեջ լեղել են հիվանդ կամ վարակիչ հիվանդութեամբ կասկածելի անասուններ, անպայման մանրամասն անտահանվում են: Այս բանը սովորաբար յերկաթուղին է անում:

Ձիերը վագոն մտցնելուց առաջ պետք է ցույց տրվին անասնաբուժին, վորն ուշադրութեամբ քննելով նրանց, տալիս է իր չեղրակացությունը — անասնաբուժական վկայագիրն ուղարկելու մասին: Անասնաբուժական վկայագրերը կցվում են յերկաթգծի փառաթղթերին և նրանց հետ դնում մինչև ձիերին իջեցնելու վայրը:

Մինչև ձիերի վագոններ մտցնելը, վորոշ ժամանակամիջոցում անհրաժեշտ է կատարել ձիերի մալխինիզացիա ¹⁾:

Ճանապարհին դառնվող անասունների անմբողջ խնամքը պետք է տանեն ուղեկցողները: Նրանք պատասխանատու յին իրենց վստահացած ձիերի անվնասութեան համար, յերևան բերելով այդ ղեպքում անհրաժեշտ նախաձեռնությունը: Ձիերին տաք ժամանակ, շիկացած յերկաթե տանիքներից խիստ տաքացած վագոններով տեղափոխելիս, ձիերին արևահարությունից պաշտպանելու համար, պետք է նրանց գլխներին դնել թաց շորեր, պարբերաբար փոխելով այդպիսիք: Ձմեռ ժամանակ ազնվացեղ ձիերին տեղափոխելիս, յերը վագոնում քիչ են անասունները և վագոնի շերմաստիճանը ցածր է, պետք է ձիերին ծածկել սթարով, խսրով և ակն:

Գնացքում, վոչ ուշ չերկու ոըր մեկ անգամ վագոնը պետք է մաքրվի գոմաղրից, բայց այդ նպատակների համար հատկացրած հատուկ տեղերում: Վոչ մի ղեպքում չի կարելի գնացքը գնալու ժամանակ գոմաղըր դուրս ածել ճանապարհի վրա:

Վագոնում ձիերի հիվանդանալու ղեպքում, ուղեկցողը պարտավոր է անմիջապես առաջին ոգնությունը ցույց տալ հիվանդացած անասունին և հենց մոտակա կայարանում կանչել անասնաբուժ: Յեթե ձին սատկել է վագոնում, ապա վոչ մի ղեպքում չի կարելի դիակը դուրս շալրտել, այլ հասնելով մոտակա կայարանը պետք է կանչել անասնաբուժին, կաղմել արձանագրություն և դիակը հանձնել:

ԱՇԽԱՏԱՆԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԿՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՈՈՈՒՄ

Կոլտնտեսություններում ձիարուծության զոովիտմինիմումի մեջ մանող կաբերազուչն տարրերից մեկը հանդիսանում է կոլտնտեսական ախոռում աշխատանքի կազմակերպման հարցը: Առանց աշխատանքի

¹⁾ Ուլախի ստուգողական պատվաստում:

ձիշտ կազմակերպման չի կարող զարգանալ կոլտնտեսական ձեռքով-
ծուծությունը:

Ձի կաբելի մոտանալ, վրձ

«Ամրապնդել կոլտնտեսությունները — սա նշանակում է ամենից ա-
ռաջ ապահովել սննստության նիւս կազմակերպումը, կոլեկտիվ ած-
խասանի նիւս կազմակերպումը» («Առգ-գյուղատնտեսություն»):

Յուրաքանչյուր կոլտնտեսական ախոռ պետք է ունենա իր ներ-
քին կարգապահութեան կանոնները, նրանցում պարզ ու վորոշ պետք
է նախատեսված լինեն ձիերի սպասարկող և հետևող անձանց ինչպես
պարտականութիւնները, այնպես էլ պատասխանատվութիւնը՝ ձիերի
անվնասութեան և աշխատունակութեան համար: Պետք է առանձնահա-
տուկ ուշադրութիւն դարձնել լիովին վերացնելու դիմադրելութիւնը
կոլտնտեսական ձիարտադրութեան և ձիոգտադործման մեջ: Ձիերի
ընդհանուր դրութեան պատասխանատվութիւնը կոլտնտեսութեան մեջ
դրվում է վարչութեան անդամներից մեկի վրա:

Կոլտնտեսական ախոռը սպասարկելու համար առանձնացվում են
հատուկ բրիգադներ, վորոնց տրվում են վորոշ թվով ձիեր:

Կոլտնտեսական ախոռը սպասարկող բրիգադը բաղկացած է ա-
խոռի ավագից և ձիապահ — հավաքարարներից: Ախոռի ավագի վրա
պարտականութիւն է դրվում հետևելու ախոռում սահմանված կարգա-
պահութեանը, խարը ժամանակին բերելուն, ձիերի պայտելուն, բու-
ժելուն և այլն:

Ձիապահի վրա դրված հիմնական պարտավորութիւններն են՝
պատրաստել ու բաժանել կերը, մաքրել ձիերին, հավաքել ու սրբել
ախոռը. մաքրել ու դուրս տանել գոմաղը, ջրել ձիերին, հետևել ձիա-
սարքին, աշխատանքի հանձնել ձիերին, ընդունել աշխատանքից վե-
րադարձող ձիերին և այլն:

Յեթն կոլտնտեսական ախոռում կա մինչև 50 ձի, ապա ախոռի
ավագը նույնպես կատարում է կերակրելու, մաքրելու և առհասարակ
ձիերին խնամելու աշխատանքները:

Հասուկ ուժաւորւթյուն պէտք է դարձնել ձիապահների բնագործան
վրա: Այդ աշխատանքի համար առաջին հերթին պետք է առանձնաց-
վեն կոլտնտեսութեան ավելի առաջավոր անդամները, ինչպես նաև
նախկին կարծիք բանակային հեծելակներն ու հրետավորները, վորոնք
գործնականորեն լավ ծանօթ են ձիերի խնամելուն:

Պետք է նկատի ունենալ, վոր ձիապահների աշխատանքը պատ-
կանում է այնպիսի աշխատանքների կարգին, վորոնց կատարումը
պահանջում է վորոշ կարողութիւն, ունակութիւն:

Ձիերին ախոռում պահելու պայմաններում մեկ ձիապահին պետք
է տրվի 15 ձի: Այդ ձիերին մեկ որվա ընթացքում պահելու, խնամե-
լու և կերակրելու, ինչպես նաև շնքը մաքրելու համար, համաձայն
Կոլտնտեսությունի մշակած նորմաների, ձիապահին տրվում է 1,25 աշխուր
Յուրաքանչյուր ձիու համար դուրս և գալիս մոտավորապես 8 հար-
յուրերորդական աշխուր:

Ձիապահի վորակով լավ աշխատելու դեպքում (ձիերի լավ մաք-
րում, կարգ ու կանոն ախոռում, կանոնավոր կերակրում և կերերի
տնտեսաբար ծախսում, ձիերի պարապուրդների բացակայութիւն
և այլն) պետք է նրա աշխատանքի գնահատութեան վրա հաշիւում
կատարել: Այդ հաշիւման չափը կարող է վորոշիւ 10—15⁰/₀ ի սահ-
մաններում: Հաշիւումը պետք է սահմանել սեզոնային աշխատանքի
վերջը, որինակ՝ գարնանացանի վերջը և այլն:

Վատ խնամելու դեպքում — վատ կերակրել, անխնա, անտնտեսա-
վար վարվել կերերի հետ և այլն, ձիապահի աշխատանքի գնահատու-
թիւնը կարող է իջեցվել մոտավորապես նույն չափով:

Աշխատանքները բացահայտ կերպով անբարեխիղճ կատարելու
դեպքում պետք է կիրառել հասարակական և նյութական ներգործման
այլ միջոցները:

Բոլոր աշխատանքները կոլտնտեսական ախոռում պէտք է կատարվեն
գործավարձի նիւթում: Կոլեկտիվ ախոռում աշխատող կոլտնտեսու-
թեան անդամների աշխատանքի գնահատութիւնը կատարվում է աշ-
խուրերով, համաձայն արտադրանքի նորմաների — հաշիւի առնելով առած
աշխատանքի քանակական յիվ վորակական կատարումը: Հաշիւումը կա-
տարում է բրիգադավարը, վորն այդ ցուցանիշները գրում է յուրա-
քանչյուր կոլտնտեսականի աշխատանքային գրքուկում:

Կոլտնտեսական ախոռում սոցիալիստական աշխատանքի մե-
թոդով — սոցիալիստականութեամբ ու հարվածայնութեամբ պետք է
ընդգրկված լինեն բոլոր աշխատողները:

Տարվա ընթացքում կարող են այնպիսի աշխատանքներ լինել,
վորոնք կատարվում են ախոռից հեռու ընկած հողամասերում, այն
ժամանակ ձիերը վորոշ ժամանակամիջոցում ախոռ չեն վերադառնում
(որինակ՝ գարնանը): Այդ դեպքում ձիերով աշխատանք կատարող
բրիգադներին կցվում են ձիապահներ, վորոնց վրա պարտավորութիւն
է դրվում խնամել և կերակրել ձիերին: Այն դեպքում, յ՛րբ այս կամ
այն աշխատանքը կատարող բրիգադն ունի իր մոտ քիչ թվով ձիեր,
ապա ձիերին խնամում են այն կոլտնտեսականները, վորոնք աշխա-
տում են այդ ձիերով, նրանց վրա յի գրվում ձիերի դուրսյան լիվ ան-
հատական պատասխանավորւթյունը:

Այս կամ այն սեզոնային տեղափոխութիւնները կատարելիս կազմակերպւում են հատուկ գումակային բրիգադներ: Այդ բրիգադում պետք է նշանակվի ավագ բրիգադավար: Ավագ նշանակվում է սովորաբար կոլտնտեսութեան ավելի ակտիվ անդամը, վրբը լավ է ճանաչում ձիերին և դիտի նրանց ոգտագործումը և բացի դրանից, վորոշ հեղինակութուն է վայելում բրիգադի անդամների մեջ: Գումակի ավագի վրա պարտավորութուն է դրվում հետեւեւել յուրաքանչյուր ձիու բնակավայրին, լծասարքի և սալակառքի սարքին լինելուն և առհասարակ ղեկավարել ամբողջ գումակի աշխատանքը:

Նկատի ունենալով, վոր ձիերն առհասարակ տարբերվում են իրարից իրենց տարիքով, առողջութեամբ, աշխատունակութեամբ և այլ հատկութիւններով՝ ուստի հարկավոր է ձիերին ըստ բրիգադների բաշխելիս նախապես բաժանել նրանց խմբերի: Սովորաբար ձիերին բաժանում են չեքիք խմբի — խոշորներ, միջակներ և մանրեր: Ըստ խմբերի, այս կամ այն բրիգադում ստացված ձիերին, ընտրում են զուգ-զույգ ըստ լծասարքի և որ առաջ նրանց հավաքում:

Մշտական տեղափոխութիւնների համար պետք է կցել վորոշ ձիեր: Ներքին տնտեսական ոգտագործման համար, ինչպես որինակ՝ կեբերը, գոմադրը կրելը և այլն, ջոկում են ավելի թույլ ձիերին, հղիներին և ծծող մտրուկ ունեցող զամբիկներին: Ավելի ուժեղ ձիերին ոգտագործում են ավելի ծանր աշխատանքների համար: Ծծող մտրուկ ունեցող զամբիկներով աշխատելիս զգուշ է վերաբերվում, դադար են տալիս հանգստանալու և մտրուկին կերակրելու համար:

Նախած աշխատանքի դժվարութեան, բանվոր ձին յուրաքանչյուր 6—10 որը մեկ պետք է հանգստանա և բացի դրանից ամեն որ ցերեկները ունենա 1—3 ժամ աշխատանքի ընդհատում:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՔԱՂՎԱԾՔ ԽՍՀՄ ԿԵՆՏՐՈՐԾԿՈՍԻ ՅԵՎ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ
1931 թ. ԳԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի ՎՈՐՈՇՈՒՍԻՑ

ԶԻԵՐԻ ԽՈՐԹԵԼՆ ԱՐԳԻԼԵԼՈՒ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԱՊՈՐԻՆԱԲԱՐ ԽՈՐԹԵԼՈՒ
ՅԵՎ ԳԻՇԱՏԻԶՈՐԵՆ ՇԱՀԱԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒ
ԹՅԱՆ ՅԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԽՍՀ Միութեան Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդի վորոշում են՝

1. Արգելվում է մորթել այն ձիերին, վորոնք պիտանի յեն աշխատանքի համար և պետքական վորպես արտադրողներ, ինչպես նաև մատղաներին, բացառութեամբ ակնհայտնր խոտանվածից:

Մորթելու համար յուրաքանչյուր առանձին ղեկավար պահանջվում է անասնաբուժական հսկողութեան թույլտվութիւնը, վորը կարող է տրվել միմիան անասունի տնտեսական և ցեղական լիակատար անպետքութեան դեպքում:

2. Զիերի անորինական (առանց անասնաբուժական հսկողութեան թույլտվութեան) մորթելու համար, վորոնք պատկանում են մենատնտեսութիւններին, ինչպես նաև այդ ձիերին դիտավորյալ կերպով խեղանգամ դարձնելու և այլ չարամիտ գործողութիւնների համար, վորոնք առաջացնում են ձիու մահ կամ հասցնում նրան անպետք դրութիւն, հանցավորները լինթարկվում են տուգանքի վարչական կարգով, համաձայն շրջանային գործադիր կոմիտեյի վորոշման:

Շրջանային գործադիր կոմիտեն այդ դեպքերում տուգանքը նշանակում է մորթած, սատկած կամ անպետքութեան հասցրած ձիու արժեքի տասնապատիկի չափով, ըստ տեղական պետական մթերումների գների:

Կուլակները և մասնավոր գնորդները, վորոնք իրենք են կատարել վերը հիշված գործողութիւնները կամ դրդել են ուրիշներին այդ բանն անելու, շրջանային գործադիր կոմիտեն կարող է բացի դրանից (տուգանքից) բռնագրավել նրանց պատկանող բոլոր անասունները կամ նրանց մի մասը:

Անկախ տուգանքից և վարչական կարգով անասունները բռնա-
գրավելուց, կուլակներն ու մասնավոր գնորդները յենթարկվում են
քրեական պատասխանատվության և դատարանի կողմից դատապարտ-
վում ազատազրկման մինչև 2 տարի ժամանակով, արտաքսվելով կամ
առանց արտաքսվելու տվյալ վայրից:

3. Ձիերի անորինական (առանց անասնաբուժական հսկողության
թույլատվության) մորթելու համար համայնացրած սեկտորում (կոլ-
անտեսություն, խորհրդատեսություն մեքենա-ձիակայան, հիմնարկներ
ու ձեռնարկներ), ինչպես նաև այդ ձիերին դիտավորյալ կեքսով խե-
ղանդամ դարձնելու համար (վորի հետևանքով ձին սատկել և կամ հա-
սել անպետքություն վիճակի), հանցավորները ընթերցվում են քրե-
ական պատասխանատվության և դատարանի կողմից դատապարտվում
ազատազրկման մինչև մեկ տարի ժամանակով:

4. Ձիերի և մանավանդ հզի գամբիկների հետ հանցավոր ան-
հոգ վերաբերմունքի համար (վորոնց շահագործումը կարող և թույլա-
տրվել զոոփետպրոտնայի սահմանած նորմաներով և վորոշմամբ),
կոլտեսություններում, խորհրդատեսություններում, մեքենա-ձիա-
կայաններում, հիմնարկներում և ձեռնարկներում, չիթե նման վերա-
բերմունքի հետևանքով ձին սատկել և կամ հասել անպետքություն վի-
ճակի, հանցավորները յենթարկվում են քրեական պատասխանատվու-
թյան և դատարանի կողմից դատապարտվում ազատազրկման մինչև
մեկ տարի ժամանակով:

Այն դեպքում, չիթե նման վերաբերմունքը կրում և սխառնաժողի
բնույթ կամ վորի հետևանքով կորչում են զգալի թվով ձիեր, հանցա-
վորները դատարանի կողմից դատապարտվում են ազատազրկման մինչև
չորս տարի ժամանակով:

Այն դեպքում, չիթե ձիերի հետ անհոգ վերաբերմունքը չի առաջաց-
նում վերը հիշված հետևանքները, փոխանակ քրեական պատասխա-
նատվության յենթարկելու, մեղավորները չենթարկվում են կարգա-
պահական տույժի, համաձայն ներքին կարգապահության կանոնների
և դրամական պահանջները ըստ գործող որենդների:

5. Այն հանցագործությունների վերաբերյալ գործերը վորոնք
նախատեսված են 2 - 4 հոդվածներով, դատարանների կողմից պետք և
նախկին հերթից դուրս: Ավելի կարևոր գործերի քննությունը դատա-
րանի կողմից պետք և կատարվի, ընդհանուր կանոնի համաձայն, կոլ-
տեսություններում, խորհրդատեսություններում, մեքենա-տրակտո-
րային կայաններում և այլն, բանվորական և կոլտեսական լայն
մասսաների ներկայությունով:

6. Միութենական հանրապետությունների կառավարությունների
առաջարկվում և իրենց որենդները համաձայնեցնեն այս վորոշման հետ:

ԸՆԹԵՐՑՈՂ ԸՆԿԵՐՆԵՐ!

ՈՒՂԱՐԿԵՑԵՔ Ձեր դիտողություններն այս գրքի մասին
ՑԵՐԵՎԱՆ ԲԵՐԵՔ գյուղատնտեսական մասսայական գրքերի թերու-
թյունները
ՈԳՆԵՑԵՔ բարելավելու նրանց վորակը

ԳՐԵՑԵՔ

1. ՆՈՐ ՑԵՎ ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ԻՆՁ ՏՎԵՑ ԱՅՍ ԳՐՔՈՒՅԿԸ.
2. ԻՆՁՆ ԵՐ ՆՐԱՆՈՒՄ ԱՆՀԱՍԿԱՆԱԼԻ ՑԵՎ ԻՆՁ ՊԵՏՔ Ե ԱՎԵԼԱՑ-
ՆԵԼ.
3. ԻՆՁՊԻՍԻ ԳՐՔԵՐ ԵՆ ՁԵՁ ՀԵՏԱՔՐՔՐՈՒՄ ՑԵՎ ԻՆՁՊԻՍԻ ՀԱՐ-
ՑԵՐԻ ՄԱՍԻՆ ԴՈՒՔ ԳԵՐԱԴԱՍՈՒՄ ԵՔ ԿԱՐԿԱԼ. ԳՐԵՑԵՔ ՄԵՁ
ՑԵՎ ՄԵՆՔ ՁԵՁ ԿՈՒՂԱՐԿԵՆՔ.
4. ԳՐՔԻ ԳԻՆԸ ՄԱՏՁԵԼԻ՞Ց ԵՆ.
5. ԻՆՁ ԵՆ ԱՍՈՒՄ ՁԵՐ ԸՆԿԵՐՆԵՐՆ ԱՅՍ ԳՐՔՈՒՅԿԻ ՄԱՍԻՆ.

ՁՄ ՈՌԱՆԱՔ

կապ պահպանելու համար հաղորդել ձեր հասցեն, անուն-ազգանունը,
սոցիալական դրությունը, «կոլտնտեսական, բաղրակ, չքավոր, մի-
ջակ» և ձեր տարիքը, զրեցեք այն գրքուկի վերնագրը և հեղի-
նակի (գրողի) ազգանունը, վորի մասին կարծիք եք գրում:

ԸՆԹԵՐՑՈՂ ԸՆԿԵՐՆԵՐ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ կազմակերպելու միջոցով յերևան բերեք նոր
հեղինակի
ԻՆՔՆԵՐԴ ԳՐԵՑԵՔ տեսություններ ձեր կոլտնտեսության աշխատանքի
փորձերի մասին
ԳՐԵՑԵՔ կարծիքներ, հոգածներ, տեսություններ և գրքեր
ԿԱՊԿԵՑԵՔ Դյուղատնտեսական գրքի հեղինակի հետ, վորից դուք
կատանաք բոլոր ցուցմունքները, թե ինչպես զրեվ գրեք կամ տեսու-
թյուն: ՁԵՐ ՆԱՄԱԿՆԵՐՆ ուղարկեցեք հետևյալ հասցեով՝ ՑԵՐԵՎԱՆ—Հոգեդ-
կոմատ ԳՅՈՒՂՀՐԱՏ-ին

ՆԱՄԱԿՆԵՐՆ ՈՒՂԱՐԿԵՑԵՔ ԱՅՍ ԴՐՈՑՄԱՆԻՑԻ



Ց Ա Ն Կ

	69
Զիաբուծական ճնշեսությունը	3
Ի՞նչ է ձիաբուծության գոյությունը	5
Ի՞նչպես կիրառել կյանքում գոյությունը	6
Ձիերի համար հարկավոր շենքեր	7
Ձիերի խնամքը	10
Ձիերի բուծումը	17
Բանվոր ձիերի լծասուրճն ու սայլակառքը	25
Ձիերի հիվանդության կանխումը	25
Պայքար ձիերի վարակիչ հիվանդությունների դեմ	27
Զոովեսմինիումը ձիերին յերկարուղով տեղափոխելու ժամանակ	32
Աւստասանի կազմակերպումը կոլեկտիվական ախոռում	33
Հավելված	37

ՀՀ Ազգային գրադարան



NL0295841

21.138

ԳԻՆԸ 50 Կ.

Դիմել Յերեվան — Հոգժողկոմա՝ Դյուզհեա